

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 27—29-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցավ «Հայաստանի օրերը Վրաստանում» բարեկամական միջոցառումը, որը կազմակերպվել էր երկու երկրների մշակույթի նախարարությունների ջանքերով:

Հայաստանից մեկնող պատվիրակության կազմում էին ՀՀ արտաքին գործոց նախարարը, արդյունաբերության, մշակույթի, տրանսպորտի, ֆինանսների և այլ նախարարությունների, գործարար մարդկանց, մամլո և հեռուստառադիոպետկոմի, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայ Առաքելական Եկեղեցին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինի օրհնությամբ, ներկայացնում էր Ս. Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Սեպուհ վարդապետ Զուլջյանը: Եռօրյա ծրագիրը խիստ հագեցած էր բազմազան հանդիպումներով ու մշակութային ծրագրերով:

Հայաստանի պատվիրակությունը հուլիսի 28-ին, Սեպուհ վարդապետի նախագահությամբ, նախ ուխտավորաբար այցելեց Հավլաբարի Ս. Գևորգ եկեղեցի, ուր ծաղկեպսակներ զետեղվեցին Սայաթ-Նովայի շիրմին, կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Ծաղկեպսակներ դրվեցին նաև Խոջիվանքի նշանավոր պանթեոնում կռիվ-կողքի հանգչող հայ ժողովրդի արժանավոր զավակների շիրիմներին:

Նույն օրը հանդիսավոր արարողությամբ Ազգային օպերայի և բալետի թատրոնի շենքում կատարվեց «Հայաստանի օրերը Վրաստանում» միջոցառման բացումը:

Հուլիսի 29-ին պատվիրակությանն ընդունեց Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Երկրորդը: Արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը Պատրիարքին պատմեց Հայաստանի ներկա վիճակի, հոգսերի ու հաջողությունների մասին: Սեպուհ վարդապետը փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները Իլիա Երկրորդին,

սերն ու աղոթքները՝ վրաց ժողովրդին, և հայտնեց Ամենակալ Հայոց Հայրիկի ցանկությունը՝ եղբայր ժողովրդին այցելելու վերաբերյալ, որպեսզի միասնաբար աղոթեն երկու ժողովուրդների առավել սիրո, միասնության ու խաղաղության համար:

Նույն օրը, կեսօրին, պատվիրակությունը հանդիպեց Վրաստանի վարչապետ Պացացիայի և կառավարության կազմի (կաբինետ) հետ, ուր շոշափվեցին առևտրական, ճանապարհային ու տնտեսական մի շարք հարցեր: Հանդիպումներն անցան երկուստեք բարի կամեցողության ջերմ մթնոլորտում:

Հանդիպումներն իրենց լրումը գտան Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում Հայաստանի Հանրապետության դեսպանատան բացումով: Օրհնված դրոշի բարձրացման ու դեսպանատան բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին բազմաթիվ այլ երկրների դեսպաններ ու ներկայացուցիչներ: Մասնավոր ընդունելության արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն և վարչապետ Պացացիան: